ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1899 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԿՈՆՎԵՆՑԻԱ)՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱԿԱՍՈՂ, ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՈՂ ՆՈՐՄԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՐՁՆՈՂ ՀԻՄՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոնվենցիան թեև չի պարունակում օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմեր, սակայն Կոնվենցիայում առկա է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող դրույթ:

Մասնավորապես Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ դատարանի անդամներն իրենց պարտականություններն իրականացնելիս և իրենց երկրի սահմաններից դուրս օգտվում են դիվանագիտական արտոնություններից և անձեռնմխելիությունից, ինչը ենթադրում է անձեռնմխելիություն քրեական, վարչական և քաղաքացիական իրավական գործընթացներից:

Սույն դրույթը խնդրահարույց է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասին, որի համաձայն Հայաստանի Հանրապետության տերիտորիայում գտնվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ենթակա են վարչական պատասխանատվության քաղաքացիների հետ ընդհանուր հիմունքներով:

Միաժամանակ Կոնվենցիայով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը: Ավելին, Կոնվենցիան ուղղակիորեն նախատեսում է վավերացում:

Ելնելով վերոգրյալից, Կոնվենցիան ենթակա է վավերացման ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ և 6-րդ և «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով, իսկ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական կամ գույքային պարտավորություններ նախատեսելու դեպքում Նախագիծը ենթակա կլինի վավերացման նաև ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և

Միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետերով:

Ն

Ա

Խ

Ա

Ր

Ա

Ր

Ի

Տ

Ե

Ղ

Ա

Կ

Ա

Լ

՝

10/17/2024

X

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: KARAPETYAN KAREN 4008830693

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ